



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔՆԱԴԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՔՆԱԴԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ**

Հ Ր Ա Մ Ա Ն

« 22 » Տապրիլ 2018թ. N 82-Ն

ԱՐՄԵՆ ՄՈՎՍԻՍՅԱՆԻՆ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ««Քաղաքացիական ծառայության մասին»» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 10-րդ մասով, 15-րդ հոդվածի 3-րդ մասի «<q²>> կետով, 15-րդ հոդվածի 4-րդ մասով, «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասի 7-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 27-ի N 445-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կանոնադրության 27-րդ կետի 9-րդ ենթակետի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2002 թվականի հունիսի 13-ի ««Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը սահմանելու մասին»» N 17-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 75-րդ և 76-րդ կետերով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչության պետի /ծածկագիր՝ 16-2.1-34/ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 2018թվականի մարտի 20-ի N 5 որոշումը և Ա. Մովսիսյանի (2018թվականի մարտի 21-ի մտ. N 32283) անձնական դիմումը

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Արմեն Մովսիսյանին 2018թվականի մարտի 23-ից, մեկ ամիս փորձաշրջանով, նշանակել Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչության պետի /ծածկագիր՝ 16-2.1-34/ պաշտոնում:

2. Աշխատավարձը՝ համաձայն հաստիքացուցակի:

ՂԵԿԱՎԱՐ

Ե. ՏԵՐՏԵՐՅԱՆ

«22» մարտի 2018թ.

ք. Երևան